ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«16» հունվար 2023թ. № 23 Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել հարկային ծառայողի վարքագծի կանոնագիրքը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

1/16/2023

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2023 թվականի հունվարի 16-ի 23 - Լ հրամանի

ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հարկային ծառայողի վարքագծի կանոնագիրքը (այսուհետ՝ Կանոնագիրք) բխում է «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված վարքագծի սկզբունքներից և հանդիսանում հանրային ծառայության բարեվարքության համակարգի տարր:

2. Կանոնագրքի սահմանման նպատակն է՝

1) ապահովել հարկային ծառայողի բարեվարք վարքագիծը.

2) ամրապնդել հանրության վստահությունը հարկային ծառայության նկատմամբ.

3) ամրապնդել հարկային մարմնում բարեվարքության, ինչպես նաև կոռուպցիայի նկատմամբ զգոնությունն ու անհանդուրժողականությունը.

4) ապահովել վարքագծի սկզբունքների կիրառման միասնականությունը.

5) հարկային ծառայողի վարքագծի նորմերի հետևողական զարգացումը.

6) հարկային ծառայության որակի բարելավումը.

7) ուղղորդել հարկային ծառայողին իր վարվելակերպում, ինչպես նաև տեղեկացնել քաղաքացիներին՝ ինչպիսի պահվածք պետք է ակնկալել ծառայողից.

8) հարկային ծառայողի կողմից իր պարտականությունները կատարելիս էթիկայի բացառիկ վարքագիծ դրսևորելուն նպաստելը:

3. Կանոնագրքով սահմանվող վարքագծի կանոնները լրացնում և պարզաբանում են Օրենքով ամրագրված վարքագծի սկզբունքները: Օրենքի իմաստով վարքագծի սկզբունքներն են՝

1) հանրությանը ծառայելու գիտակցում.

2) հավատարմությունը հանրային շահին.

3) բարեկրթություն և հարգալիրություն.

4) բարեխղճություն.

5) օբյեկտիվություն:

4. Կանոնագրքում սահմանվող վարքագծի կանոնները ծառայողական պարտականությունները կատարելիս հարկային ծառայողների ծառայողական էթիկայի և ծառայողական վարքագծի ընդհանուր նորմերի և կանոնների ամբողջություն են, որով պետք է առաջնորդվեն հարկային ծառայողները՝ անկախ իրենց զբաղեցրած պաշտոններից:

5. Կանոնագրքով սահմանվում են նաև հարկային ծառայողի՝ որպես մասնավոր անձի վարքագծի որոշակի կանոններ:

6. Կանոնագրքում սահմանվող վարքագծի կանոններն ունեն պարտադիր և խրախուսելի բաղադրիչներ:

7. Կանոնագրքում սահմանվող վարքագծի կանոնների պարտադիր բաղադրիչը (այսուհետ՝ Պարտադիր կանոններ) որոշակի վարքագծի հետևելու պարտադիր կանոնների համախումբ է: Կանոնագրքում սահմանվող Պարտադիր կանոններին չհետևելու համար հարկային ծառայողը կարող է ենթարկվել օրենքով նախատեսված կարգապահական պատասխանատվության: Պարտադիր կանոնները կիրառման ենթակա են ինչպես ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում, այնպես էլ ծառայողական պարտականություններից դուրս:

8. Կանոնագրքում սահմանվող վարքագծի կանոնների խրախուսելի բաղադրիչն (այսուհետ՝ Խրախուսելի կանոններ) օրինակելի չափանիշների շարք է, որը պարտադիր նվազագույնից ավելին է և բնորոշում է գերազանցությունը հարկային ծառայության համակարգում: Ընդ որում, Խրախուսելի կանոնների թվարկումը սպառիչ չէ: Կանոնագրքում սահմանվող Խրախուսելի կանոններին չհետևելու համար հարկային ծառայողը չի կարող կարգապահական պատասխանատվության ենթարկվել, սակայն սեփական վարքագծի համապատասխանեցումն այդ նորմերին խրախուսելի է:

9. Կանոնագրքում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) **վարքագծի կանոններ**՝ Օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող նորմեր, որոնք կարգավորում են հարկային ծառայողի բարեվարք գործելակերպը պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում և դրանցից դուրս.

2) **նվեր**՝ Օրենքի իմաստով նվեր հանդիսացող գույքային առավելություն.

3) բարեվարքություն՝ ընդհանուր էթիկական արժեքներին, սկզբունքներին և նորմերին համապատասխան գործունեություն և դրանց պահպանում, որի նպատակն է

ամրապնդել մասնավոր շահերի նկատմամբ հանրային շահի գերակայությունը և պաշտպանությունը պետական համակարգում.

4) **հանրային շահ՝** սահմանադրական արժեք, որի պաշտպանության համար հիմնական իրավունքը կամ ազատությունը կարող է սահմանափակվել: Հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար: Հանրային շահի կրողը հասարակությունն է՝ որպես մեկ միասնական, ամբողջական օրգանիզմ: Ընդ որում, շահը հանրային որակելու համար պարտադիր նախապայման չէ հասարակության բոլոր անդամների կողմից այդ շահի ընկալելի, ընդունելի լինելու հանգամանքը:

5) **սեռական ոտնձգություն՝** սեռական բնույթի խոսքային, ոչ խոսքային կամ ֆիզիկական գործողությամբ դրսևորվող ցանկացած վարքագիծ, որը նպատակ ունի խոցելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ճնշող, թշնամական, նվաստացուցիչ, նվաստացնող կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելը.

6) **հարկային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձ՝** հարկային ծառայության բարձրագույն պաշտոն զբաղեցնող անձինք, վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի պարտականություններ ունեցող անձինք.

7) **հանրային ռեսուրսներ՝** ծառայողական պարտականությունների իրականացման համար նախատեսված նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցներ, մարդկային ռեսուրսներ, աշխատաժամանակ:

10. Հարկային ծառայողը կարող է Կանոնագրքում սահմանվող վարքագծի կանոնների դրսևորման առնչությամբ մասնագիտական խորհրդատվության համար դիմել հարկային մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչին կամ օրենքով սահմանված դեպքերում՝ խորհրդատվություն տրամադրելու իրավասություն ունեցող այլ անձի:

ԲԱԺԻՆ 2. ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ԵՆԹԱԲԱԺԻՆ 1. ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ԾԱՌԱՅԵԼՈՒ ԳԻՏԱԿՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ԳԼՈՒԽ 1. ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

11. Հարկային ծառայողը պարտավոր է գործել իրավունքի գերակայության սկզբունքին, օրենքի ոգուն և տառին համապատասխան:

12. Հարկային ծառայողը պարտավոր է հարգել և պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սահմանադրական օրենքները, օրենքները և այլ իրավական ակտերը, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերը:

13. Հարկային ծառայողը պարտավոր է զերծ մնալ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը կարող է ընկալվել որպես անօրինականության խրախուսում կամ դրա նկատմամբ հանդուրժողականություն կամ անհարգալից վերաբերմունք օրինավոր վարքագծի նկատմամբ:

14. Հարկային ծառայողը պարտավոր է տեղեկացնել իր անմիջական ղեկավարին իր նկատմամբ քրեական վարույթ հարուցված լինելու մասին կամ քրեական վարույթի հնարավոր հարուցման մասին, եթե տիրապետում է նման տեղեկատվության: Նման տեղեկատվություն ստանալուց հետո տվյալ ծառայողի ծառայությունը շարունակելու կամ դադարեցնելու կամ կասեցնելու հարցը կարգավորվում է օրենքով սահմանված կարգով:

15. Հարկային ծառայողը չպետք է օգտագործի իր պաշտոնեական դիրքը կամ հարաբերությունները՝ ազդելու կամ միջամտելու այն գործողություններին, որոնք պետք է իրականացվեն հարկային մարմնի հետաքննության մարմինների կամ այլ իրավապահ մարմինների կողմից:

16. Հարկային մարմնի և ծառայողների դեմ բողոքները պետք է քննվեն արագ և օբյեկտիվ:

17. Եթե հարկային ծառայողը կարծում է, որ իր անմիջական ղեկավարի կողմից տրված հանձնարարությունը կամ այլ ծառայողի կողմից տրամադրված ուղղորդումը դրդում է ծառայողին ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում դրսևորել անօրինական, անպատշաճ, էթիկայի կանոններից դուրս կամ որևէ կերպ վարքագծի կանոնները խախտող վարքագիծ, պարտավոր է այդ մասին զեկուցել իր անմիջական ղեկավարի վերադասին, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ներքին անվտանգության կամ հետաքննություն իրականացնելու լիազորություն ունեցող ստորաբաժանմանը: Ծառայողներին պետք է տրամադրվի համապատասխան պաշտպանություն նման գործողությունների համար: Այս առումով տեղեկատվության փոխանակման մեխանիզմները պետք է զերծ լինեն անհարկի ազդեցությունից:

18. Վերադաս անձը կամ ներքին անվտանգության կամ հետաքննություն իրականացնելու լիազորություն ունեցող ստորաբաժանումը պետք է արդյունավետ քայլեր ձեռնարկեն նման բոլոր տեղեկությունները մանրակրկիտ քննելու համար:

19. Հարկային ծառայողը պարտավոր է պահպանել ծառայության իր պաշտոնի հետ անհամատեղելի Օրենքով, «Հարկային ծառայության մասին» օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պաշտոններ ստանձնելու և գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու կամ որոշակի աշխատանքներ կատարելու արգելքները:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆՆԵՐ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

20. Հարկային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է օրինակ ծառայել և անձամբ պահպանել վարքագծի այն պահանջները, որոնք ակնկալում է մյուսներից:

21. Հարկային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հստակորեն տիրապետել հարկային մարմնի կամ ստորաբաժանման քաղաքականություններին և նպատակներին, դրանց մասին պատշաճ տեղեկացնել իրեն ենթակա հարկային ծառայողներին:

22. Հարկային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է, անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով բարեվարքության հարցերով կազմակերպչի կամ էթիկայի հանձնաժողովի հետ, պատասխանել Կանոնագրքի պատշաճ իրագործման վերաբերյալ հարցերին:

23. Հարկային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, պաշտպանել իրեն ենթակա հարկային ծառայողների և այլ աշխատակիցների օրինական շահերը՝ միջամտելով նրանց հանդեպ ոտնձգության կամ այլ անարդար վերաբերմունքի ցանկացած դրսևորման դեպքում:

24. Հարկային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում ենթականերին զերծ պահել ոչ հիմնավոր գործողություններ կատարելուց կամ որոշումներ կայացնելուց, աշխատանքային հարաբերություններում բացառել իր կողմից խտրական վարքագծի դրսևորումը, ինչպես նաև վերադասության լիազորության չարաշահումը:

25. Հարկային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է չտալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին հակասող, ինչպես նաև իր կամ կատարողի լիազորությունների շրջանակներից դուրս հանձնարարականներ:

26. Հարկային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր ենթակայությամբ աշխատող հարկային ծառայողների և այլ աշխատակիցների կողմից կոռուպցիոն բնույթի գործողությունների և այլ խախտումների վերաբերյալ հաղորդումներ ստանալու դեպքում պարտադիր գործուն քայլեր ձեռնարկել՝ դրանց առնչությամբ հետագա գործողությունների ընթացքն ապահովելու համար:

27. Հարկային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պետք է ձեռնարկի բոլոր ողջամիտ քայլերն իրեն ենթակա հարկային ծառայողների և այլ աշխատակիցների շրջանում Հայաստանի Հանրապետության օրենքների, Կանոնագրքի և հանրային ծառայության սկզբունքների մասին իրազեկվածությունն ապահովելու ուղղությամբ, հետևողական լինի դրանց պահպանմանը:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻՆ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ԳԼՈՒԽ 3. ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻՆ

28. Հարկային ծառայողը պարտավոր է առավելագույն ջանասիրությամբ ծառայել հանրությանը, հանրային շահին ու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովմանը, ի պաշտոնե վերապահված լիազորությունների, կարողությունների և իրավասության շրջանակներում պարտականությունները կատարել նվիրվածությամբ և առավելագույն արդյունավետությամբ:

29. Հարկային ծառայողը պարտավոր է իր ազնիվ վարքագծով օրինակ ծառայել այլ հարկային ծառայողներին և հանրությանը:

30. Հարկային ծառայողը պարտավոր է իր լիազորություններն իրականացնելիս զգայունություն ցուցաբերել հասարակության բոլոր անդամների, հատկապես՝ խոցելի խմբերի կարիքների նկատմամբ:

31. Հարկային ծառայողը պարտավոր է ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում աջակցել հարկային մարմնի հետ հարաբերվող անձանց՝ իրացնելու իրենց այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով:

32. Հարկային ծառայողը պարտավոր է զերծ մնալ այնպիսի պահվածքից, որը կարող է կասկածի տակ դնել հարկային ծառայողի աշխատանքային պարտականությունները բարեխղճորեն իրականացնելու փաստը, ինչպես նաև խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից, որոնք կարող են վնաս հասցնել իր համբավին կամ հարկային մարմնի հեղինակությանը:

33. Հարկային ծառայողը պարտավոր է հարկային մարմնի հեղինակությունը պահպանելու հարցում լինել հետևողական, բացահայտել և հնարավորինս վերացնել իր և այլ հարկային ծառայողների կողմից թույլ տրված սխալները և բացթողումները:

34. Հարկային ծառայողը պարտավոր է ծառայողական պարտականություններն իրականացնելիս կիրառել իրավասու մարմինների կողմից ընդունված պարտադիր կատարման ենթակա և վերաբերելի քաղաքականությունները, ուղեցույցները, որոշումները և կազմակերպահրավական բնույթի այլ ակտերը՝ անկախ անձնական համոզմունքներից և մոտեցումներից, ենթարկվել վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի օրինական պահանջներին:

35. Հարկային ծառայողը պարտավոր է անհրաժեշտության դեպքում մասնագիտական առարկություններ և առաջարկություններ ներկայացնել նախատեսվող պարտադիր կատարման ենթակա և վերաբերելի քաղաքականությունների, ուղեցույցների, որոշումների և կազմակերպահրավական բնույթի այլ ակտերի վերաբերյալ՝ նախքան դրանց ընդունումը, իսկ դրանց ընդունումից հետո՝ կատարել դրանց պահանջները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ակնհայտորեն ուղղված չեն մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության կամ հանրային շահի պաշտպանության կամ հարկային մարմնի իրավունքների պաշտպանության և/կամ դրա գործառույթների իրականացման ապահովմանը:

36. Հարկային ծառայողը պարտավոր է հարկային մարմնում գործունեության և այլ ոլորտներում առկա հանգամանքների վերաբերյալ քննադատական մտահոգություններ արտահայտելիս լինել հարգալից և զուսպ:

37. Հարկային ծառայողը պարտավոր է խուսափել հարկային ծառայությունը վարկաբեկելուց կամ նսեմացնելուց:

38. Հարկային ծառայողը պարտավոր է չօգտագործել զբաղեցրած պաշտոնն իր, այլ անձանց կամ մասնավոր կազմակերպությունների համար արտոնություններ, բացառություններ և նպաստավոր այլ պայմաններ ստեղծելու համար:

ԳԼՈՒԽ 4. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

39. Հարկային ծառայողը պարտավոր է իր լիազորություններն իրականացնելիս ապահովել թափանցիկություն և հաշվետվողականություն՝ բացառությամբ օրենսդրությամբ և հարկային մարմնի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերի:

40. Հարկային ծառայողը պարտավոր է հարկային մարմնի այլ ստորաբաժանումների հետ գործողությունները համակարգելիս և համագործակցելիս գործել թափանցիկ, ինչպես նաև պատշաճ կերպով արձագանքել առաջացած խնդիրներին:

41. Հարկային ծառայողը պարտավոր է բացառել չճշտված, իրականությանը չհամապատասխանող և ապակողմնորոշող տեղեկությունների տրամադրումը, այլ հարկային ծառայողներից չպահանջել նման տեղեկությունների տրամադրում:

42. Հարկային ծառայողը պարտավոր է օրենքով սահմանված դեպքերում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված հարցումներին ի պատասխան Օրենքով սահմանված կարգով ներկայացնել պարզաբանումներ և լրացուցիչ նյութեր՝ գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի ստուգման և վերլուծության նպատակով:

43. Հարկային ծառայողը պարտավոր է օրենքով սահմանված դեպքերում և կարգով ապահովել հանրության մասնակցությունը որոշումների կայացման հարցում:

ԳԼՈՒԽ 5. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

44. Հարկային ծառայողն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է խուսափել այնպիսի գործողության կատարումից կամ որոշման կայացումից, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես ուղղակի կամ անուղղակի անձնական շահով կամ Օրենքի իմաստով՝ իր հետ փոխկապակցված անձի շահով առաջնորդվել:

45. Եթե հարկային ծառայողի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման, ապա հարկային ծառայողը պարտավոր է իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին, իսկ վերադաս անձ կամ անմիջական ղեկավար չունենալու դեպքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր հայտարարություն ներկայացնել շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին: Նախքան վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի գրավոր հանձնարարություն կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից առաջարկություն ստանալը՝ հարկային ծառայողը պարտավոր է զերծ մնալ հարցի վերաբերյալ որևէ գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց:

46. Հարկային ծառայողը պարտավոր է իր լիազորությունները կատարելիս խուսափել այնպիսի հարաբերություններից, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել շահերի բախում կամ որոնց առկայության պայմաններում ծառայողը հնարավորություն չի ունենա անաչառ և անկողմնակալ կատարելու իր պարտականությունները:

47. Հարկային ծառայողը պարտավոր է խուսափել այնպիսի գործառույթներ ստանձնելուց, որոնց իրականացման ընթացքում կանխատեսելի կլինեն հաճախակի շահերի բախման իրավիճակներ:

48. Հարկային ծառայողը պարտավոր է չտալ ոչ օբյեկտիվ երաշխավորություններ կամ չանել միջնորդություններ իրեն կամ որևէ այլ անձին հարկային մարմնում պաշտոնի նշանակելու, առաջխաղացման, պաշտոնեական կարգավիճակի բարելավման և այլ հարցերով, ինչպես նաև չդրդել որևէ մեկին նման երաշխավորություններ տալ կամ միջնորդություններ անել:

49. Այն դեպքում, երբ հարկային ծառայողն ինքուրույն չի կարողանում որոշել արդյոք առկա է շահերի բախման իրավիճակ, պետք է դիմի հարկային մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչին՝ հետագա վարքագծի մասով ուղղորդում ստանալու նպատակով:

50. Հարկային ծառայողը պարտավոր է չտալ այնպիսի խոստում կամ չստանձնել այնպիսի հանձնառություն, որը պարտավորեցնում է ծառայողին վարվել ըստ տրված խոստման կամ ստանձնած հանձնառության, այն դեպքում, երբ նման խոստման կամ հանձնառության իրականացումը չի բխում ծառայողի լիազորությունների շրջանակներից կամ հակասում է հանրային շահին և/կամ սահմանված նորմերին, ընթացակարգերին:

ԳԼՈՒԽ 6. ՆՎԵՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐԳԵԼՔ

51. Հարկային ծառայողը պարտավոր է զերծ մնալ Օրենքի իմաստով ոչ թույլատրելի նվեր ընդունելուց կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տալուց, եթե նման նվերը ողջամտորեն չէր տրամադրվի հարկային ծառայող չհանդիսացող անձի:

52. Հարկային ծառայողը պարտավոր է զերծ մնալ ոչ նյութական առավելություն ընդունելուց, եթե կարող է ընկալվել, որ դա կարող է ազդել իր լիազորությունների պատշաճ իրականացման վրա: Ոչ նյութական առավելություն կարող է լինել, օրինակ, արտոնյալ դիրքը կամ բարիքներից արագ օգտվելու հնարավորությունը, ինչի դեպքում դրանց դրամական արժեքն ակնհայտ չէ:

53. Հարկային ծառայողը պարտավոր է բոլոր դեպքերում, բացառությամբ՝ սահմանված շեմը չգերազանցող արժեք ունեցող թույլատրելի նվերների, վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել ստացված նվերի, այդ թվում՝ ոչ նյութական առավելության մասին:

54.Նվերների ընդունումը պետք է հստակ թույլատրելի լինի միայն այն դեպքում, եթե դրանք՝

1) ունեն նվազագույն կամ սիմվոլիկ արժեք (մինչև 60 հազար դրամ),

2) գտնվում են քաղաքավարության, հյուրընկալության կամ արարողակարգի սովորական չափանիշների մեջ,

3) չեն վտանգում հարկային ծառայողի կամ հարկային մարմնի բարեվարքությունը:

55.Եթե որևէ իրավիճակում անհնար է հրաժարվել նվերներից, որոնք չեն համապատասխանում վերոնշյալ պահանջներին, ապա ծառայողը պարտավոր է այդ մասին գրավոր զեկուցել իր անմիջական ղեկավարին հետագա վարքագծի մասով ցուցում ստանալու նպատակով: Անմիջական ղեկավարը գրավոր տեղեկացնում է ծառայողին նվերը, հյուրասիրությունը կամ այլ առավելության տրամադրման մերժման անհրաժեշտության կամ հարկային մարմնում գերատեսչական պահպանման ենթակա լինելու, որպես բարեգործություն օգտագործվելու կամ ծառայողի կողմից տնօրինվելու հնարավորության մասին:

56. Այն դեպքերում, երբ ստացվել են թանկարժեք (60 000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող) նվերներ, (օրինակ՝ օտարերկրյա պետական

մարմինների կողմից մշակութային կամ արարողակարգային նկատառումներով), ապա տվյալ նվերը պետք է հանձնվի հարկային մարմնին և ներառվի մարմնի հաշվեկշռում:

57. Այն դեպքում, երբ հարկային ծառայողն ինքնուրույն չի կարողանում որոշել արդյոք ստացված առավելությունը նվեր է համարվում Օրենքի իմաստով, թե՝ ոչ, կամ թույլատրելի է, թե՝ ոչ, պետք է դիմի հարկային մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչին՝ հետագա վարքագծի մասով ուղղորդում ստանալու նպատակով:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 3. ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԳԱԼԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ԳԼՈՒԽ 7. ՀԱՐԳԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ

58. Հարկային ծառայողը պարտավոր է հարգել Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները (դրոշը, զինանշանը, օրհներգը) և պետական լեզուն, ինչպես նաև այլ պետական մարմինների՝ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված խորհրդանիշներն ու տարբերանշանները:

59. Հարկային ծառայողը պարտավոր է զերծ մնալ ծառայողական գործունեության համար նախատեսված տարածքներում Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներից, պետական մարմինների՝ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված խորհրդանիշներից ու տարբերանշաններից, լիազոր մարմինների կողմից ընդունված արարողակարգային խորհրդանիշներից և տարբերանշաններից, օտարերկրյա պատվիրակությունների հետ հանդիպումների ընթացքում՝ այդ պետությունների պետական խորհրդանիշներից, միջազգային կառույցների հետ հանդիպումների ընթացքում՝ այդ կառույցների խորհրդանիշներից ու տարբերանշաններից բացի որևէ այլ խորհրդանիշի կամ տարբերանշանի ցուցադրումից:

60. Հարկային ծառայողը պարտավոր է հարգել այլ հարկային ծառայողների և հասարակության բոլոր անդամների արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները:

61. Հարկային ծառայողը պարտավոր է ցանկացած պայմաններում և իրավիճակներում իր գործողություններով, գործնական, մասնագիտական և բարոյական հատկանիշներով զերծ մնալ հարկային ծառայության հեղինակությանը ոչ հարիր կամ այն վարկաբեկող, հարկային ծառայության նկատմամբ հանրության վստահությունը

նվազեցնող կամ հարկային ծառայողի անկողմնակալության, անաչառության և անկախության նկատմամբ կասկած հարուցող վարքագիծ դրսևորելուց:

ԳԼՈՒԽ 8. ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

62. Հարկային ծառայողը պարտավոր է ծառայողական պարտականությունները կատարելիս՝ այլ անձանց հետ հաղորդակցության ժամանակ, այդ թվում՝ նամակագրությամբ կամ հեռախոսով հաղորդակցվելիս, ներկայանալ՝ հայտնելով անունը, ազգանունը, հարկային մարմնի համապատասխան ստորաբաժանումը, որը ներկայացնում է՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

63. Հարկային ծառայողը պարտավոր է ի պաշտոնե հաղորդակցության բոլոր միջոցներն օգտագործելիս, ցանկացած իրավիճակում ցուցաբերել զսպվածություն, հավասարակշռվածություն և հարգալիրություն:

64. Հարկային ծառայողը պարտավոր է գործընկերների հետ հարաբերություններում դրսևորել նրբանկատություն, չբարձրացնել ձայնն աշխատավայրում, գործընկերոջ վերաբերյալ քննադատություն արտահայտել միայն նրա ներկայությամբ՝ պարզաբանելով բոլոր հիմքերը:

65. Հարկային ծառայողը պարտավոր է գործընկերների և պետական այլ մարմինների աշխատակիցների հետ հարաբերվելիս լինել նրբանկատ, զուսպ, հարգալից, բարեկիրթ, չխոչընդոտել այլ հարկային ծառայողների աշխատանքային պարտականությունների կատարմանը:

66. Հարկային ծառայողը պարտավոր է զերծ մնալ արտոնյալ վերաբերմունք դրսևորելուց որևէ մեկի նկատմամբ՝ պայմանավորված հարկային ծառայության համակարգում այդ անձի ունեցած պաշտոնով:

67. Հարկային ծառայողը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, պարտավոր է չգործադրել ֆիզիկական ուժ կամ դրա վերաբերյալ սպառնալիք չներկայացնել, ինչպես նաև չգործադրել հոգեբանական բռնությունն և այլ սպառնալիքներ չներկայացնել:

68. Հարկային ծառայողը պարտավոր է աշխատանքի ներկայանալ պատշաճ տեսքով (կոկիկ սանրվածք, կեցվածք), պահպանել արտաքին տեսքին ներկայացվող՝ հարկային մարմնի կողմից սահմանված կանոնները:

69. Հարկային ծառայողին արգելվում է թմրամիջոցներ կամ հոգեներգործուն նյութեր օգտագործել, բացառությամբ՝ օրինական բժշկական նպատակներով օգտագործման կամ ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվել:

70. Հարկային ծառայողին արգելվում է ծխել այն վայրերում, որտեղ դա արգելված է, աշխատանքի վայրում՝ բացառությամբ ծխելու համար սահմանված տարածքների, ինչպես նաև խախտել հրդեհային անվտանգության և սանիտարական նորմերն ու կանոնները:

71. Հարկային ծառայողը պարտավոր է զերծ մնալ ցանկացած տեսակի, այդ թվում՝ սեռական ոտնձգության դրսևորումներից կամ նման տպավորություն ստեղծելուց:

ԳԼՈՒԽ 9. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՎ

72. Հարկային ծառայողը պարտավոր է պաշտոնական հարցազրույց տալիս կամ հաղորդակցվելիս պահպանել հարկային մարմնի սահմանած կանոնները, հաղորդակցության ռազմավարությունը, ուղենիշները, որոշումները և պաշտոնական դիրքորոշումը:

73. Հարկային ծառայողը պարտավոր է հարգել հանրության իրազեկմանն ուղղված զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը, ինչպես նաև իր իրավասության սահմաններում աջակցել նրանց սահմանված կարգով հավաստի տեղեկություններ ստանալու հարցում:

74. Հարկայի ծառայողը պարտավոր է սոցիալական ցանցերում չկատարել որևէ գրառում կամ մեկնաբանություն, չհավանել կամ չտարածել գրառումներ, որոնք կարող են վնասել, նսեմացնել կամ այլ եղանակով արատավորել հարկային ծառայության հեղինակությունը:

75. Հարկային ծառայողը պարտավոր է սոցիալական ցանցերում չմեկնաբանել, չքննադատել, չքննարկել իր աշխատավայր հանդիսացող հարկային մարմնի

գործառույթները, որոշումները, գործունեությանն առնչվող խնդիրները և իրավական հարցերը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա բխում է ի պաշտոնե իրականացվող գործառույթներից, ինչպես նաև դրանց վերաբերյալ չտարածել ոչ պաշտոնական լուրեր:

76. Հարկային ծառայողը պարտավոր է խուսափել սոցիալական ցանցերում անձնական այնպիսի լուսանկարներ և տեսագրություններ հրապարակելուց, որոնք կարող են հարկային ծառայությունը վարկաբեկող լուրերի տարածման պատճառ հանդիսանալ:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 4. ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ԳԼՈՒԽ 10. ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՉՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

77. Հարկային ծառայողը պարտավոր է պահպանել ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած՝ օրենքով պահպանվող գաղտնի տեղեկություններ պարունակող փաստաթղթերի և նյութերի հետ աշխատելու՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

78. Հարկային ծառայողը պարտավոր է այլ նպատակներով չօգտագործել, չհրապարակել կամ այլ կերպ մատչելի չդարձնել (այդ թվում՝ պաշտոնից ազատվելուց հետո) պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ իրեն հայտնի դարձած (մասնավորապես ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ օգտագործվող ավտոմատացված համակարգերից ստացված տեղեկատվությունը) ոչ հրապարակային տեղեկությունները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, իսկ նման տեղեկությունները երրորդ անձանց հասանելի դառնալու դեպքում՝ անմիջապես պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել իր վերադաս անձին, անմիջական ղեկավարին կամ գաղտնի տեղեկությունների պահպանությունն իրականացնող ստորաբաժանման ղեկավարին:

79. Հարկային ծառայողը պարտավոր է պատշաճ կերպով և գաղտնիության, անձնական տվյալների պաշտպանության և անվտանգության կանոնները պահպանելով՝ մշակել և տնօրինել պաշտոնեական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված իր տնօրինության տակ հայտնված տվյալները, տեղեկությունները, գաղտնաբառերը և այլն:

80. Հարկային ծառայողը պարտավոր է ձեռնպահ մնալ իր լիազորությունների կատարման հետ չառնչվող պետական կամ ծառայողական գաղտնիքի տեղեկակիրներին, տեղեկություններին, գաղտնաբառերին կամ հատուկ պահպանվող տարածքներին հասանելիություն ստանալուն ուղղված քայլերի ձեռնարկումից, ինչպես նաև առանց թույլտվության դրանց տեղեկակիրների պատճենահանումից, ձայնագրումից, լուսանկարումից կամ տեսագրումից:

81. Հարկային ծառայողը պարտավոր է իր աշխատանքային և պաշտոնեական պարտականություններից չբխող հետազոտություններում կամ աշխատություններում չօգտագործել այնպիսի տեղեկություններ, որոնք, թեև ենթակա են հրապարակման, սակայն դեռևս չեն հրապարակվել հարկային մարմնի կողմից:

82. Հարկային ծառայողը պարտավոր է չհրապարակել օրենքով սահմանված դեպքերում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված բարեվարքության եզրակացության տվյալները, հարցազրույցների ընթացքում դրա հետ կապված հարցադրումները կատարել՝ առանց ուղղակիորեն հղում կատարելու եզրակացությանը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

ԳԼՈՒԽ 11. ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԲԱՐԵԽԻՂՃ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

83. Հարկային ծառայողը պարտավոր է իր գործունեության համար տրամադրված հանրային ռեսուրսները և այլ գույքն օգտագործել միայն ծառայողական նպատակներով և խնայողաբար:

84. Հարկային ծառայողը պարտավոր է հանրային ռեսուրսները, այդ թվում՝ այլ հարկային ծառայողների աշխատաժամանակը, չօգտագործել սեփական շահերը բավարարելու կամ այլ անձնական նպատակներով:

85. Հարկային ծառայողը պարտավոր է իր աշխատաժամանակը չօգտագործել իր պաշտոնեական լիազորություններից դուրս այլ գործողություններ կատարելու համար, եթե կիրառելի նորմերին համապատասխան այլ բան չի համաձայնեցվել իր վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի հետ:

86. Հարկային ծառայողն իր լիազորություններն իրականացնելիս լոգիստիկ, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական կամ համայնքային այլ գույքը

(փոխադրամիջոցներ, շենքեր, ապրանքներ, սարքավորումներ և այլն) օգտագործում է օրենքով նախատեսված սահմաններում և եղանակով:

87. Հարկային ծառայողը իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է իրեն ամրագրված զենքը և պաշտոնեական պարտականությունների կատարման հետ կապված այլ միջոցները օգտագործել օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

88. Պետական մարմինների, հարկային մարմնի համակարգչային համակարգերը, կառավարական ցանցը, ծրագրերը, սարքավորումները, ինտերնետը և էլեկտրոնային փոստը պետք է օգտագործվեն բացառապես պաշտոնական պարտականությունների իրականացման նպատակներով:

89. Ինտերնետի և էլեկտրոնային փոստի սահմանափակ անձնական օգտագործումը թույլատրվում է պայմանով, որ այն համապատասխանում է բոլոր վերաբերելի օրենքներին, քաղաքականությանը և ուղեցույցներին և չի ազդում ծառայողների աշխատանքային պարտականությունների կատարման վրա: Ընդունելի սահմանափակ օգտագործման օրինակներ կարող են հանդիսանալ մասնագիտական գործունեությունը, կարիերայի զարգացումը կամ կարճ էլեկտրոնային հաղորդագրության ընթերցումը կամ գրելը ընդմիջման ժամերին կամ աշխատանքի ժամերից դուրս:

90. Պետական էլեկտրոնային ցանցերի օգտագործմամբ արգելվում է՝

1) դիտել, ներբեռնել, տիրապետել կամ տարածել պոռնոգրաֆիկ պատկերներ կամ նյութեր,

2) էլեկտրոնային ցանցերի անվտանգության համակարգերը կոտրելը կամ կոտրելու փորձը,

3) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում տեղեկատվության ISO/IEC 27001:2013 միջազգային ստանդարտների չապահովումը:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 5. ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ԳԼՈՒԽ 12. ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ

91. Հարկային ծառայողը պարտավոր է իր պարտականություններն իրականացնելիս դրսևորել անաչառություն, զերծ մնալ խոսքով կամ վարքագծով կողմնակալություն ցուցաբերելուց, գործել այնպես, որ իր անկողմնակալության նկատմամբ անհարկի կասկած չհարուցվի կամ ողջամտորեն այդպիսի տպավորություն չստեղծի, չառաջնորդվել

ենթադրություններով, հույզերով, անձնական վերաբերմունքով և այլ կողմնակի ազդեցությամբ: Հարկային ծառայողը պարտավոր է բացառել խտրական վերաբերմունքի դրսևորումը որևէ կազմակերպության, խմբի կամ անհատի նկատմամբ՝ կապված նրա սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնության պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

92. Հարկային ծառայողը պարտավոր է իր գործընկերների հետ հարաբերվելիս՝ մասնագիտական աջակցության, կարողությունների զարգացման, կատարողականի գնահատման, առաջխաղացման և աշխատանքային հարաբերություններից բխող այլ գործողություններում, ցուցաբերել հավասար վերաբերմունք:

ԳԼՈՒԽ 13. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԵԶՈՔՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՍՊՎԱԾՈՒԹՅՈՒՆ

93. Հարկային ծառայողը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն, այդ թվում՝ հրապարակայնորեն չարտահայտել իր քաղաքական տեսակետները, ձեռնպահ մնալ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը կարող է քաղաքական գործունեությամբ զբաղվելու տպավորություն ստեղծել:

94. Հարկային ծառայողը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս չդրսևորել հովանավորչություն որևէ կուսակցության, քաղաքական կազմակերպության կամ շարժման նկատմամբ, որը, ի թիվս այլնի, ներառում է հարկային մարմնի տարածքում և տեղեկատվական նյութերում կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) կամ թեկնածուներին բնորոշող խորհրդանիշներ կամ անհատականացնող այլ նշաններ ցուցադրելը, ինչպես նաև հարկային մարմնում որևէ թեկնածուի կամ կուսակցության օգտին կամ դեմ քարոզ իրականացնելը:

95. Հարկային ծառայողը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս չկատարել քաղաքական շահը սպասարկող քայլեր կամ ներգրավվել դրանց պաշտպանության մեջ, չկատարել նման գործունեության համար հանրային միջոցներ

տրամադրելու պահանջները, ինչպես նաև նման պահանջներ չներկայացնել այլ հարկային ծառայողների:

96. Հարկային ծառայողը պարտավոր է զերծ մնալ քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալուց, քաղաքական կողմնորոշում ունեցող հոդվածներ հրապարակելուց կամ սոցիալական էջերում քաղաքական որևէ կուսակցության օգտին կամ դրա դեմ գրառումներ կատարելուց, նմանատիպ գրառումներ հավանելուց կամ տարածելուց:

ԳԼՈՒԽ 14. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆՈՒՅԹԻ ԴԵՊՔԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

97. Հարկային ծառայողը պարտավոր է իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին կամ իր նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձին կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր հաղորդում ներկայացնել կոռուպցիոն բնույթի դեպքերի, շահերի առերևույթ բախման իրավիճակների, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, Օրենքով սահմանված հայտարարագրման կանոնների առերևույթ խախտման, այլ վնասակար գործողությունների, հանրային շահին ուղղված վնասի կամ էական գործառնական սխալների մասին:

98. Հարկային ծառայողը պարտավոր է պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր հաղորդում ներկայացնել իր կամ իր վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի կողմից թույլ տրված առերևույթ խախտումների, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում հայտնաբերված այլ խախտումների վերաբերյալ: Իր կողմից թույլ տրված առերևույթ խախտումների վերաբերյալ հարկային ծառայողը հաղորդում է ներկայացնում իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին, իսկ իր վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի կողմից թույլ տրված առերևույթ խախտումների վերաբերյալ՝ վերջիններիս վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին:

99. Հարկային ծառայողը պարտավոր է վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել իր գործառույթներով պայմանավորված՝ երրորդ անձանց կողմից ցանկացած օգուտ կամ առավելություն տալու առաջարկի բոլոր դեպքերի վերաբերյալ:

100. Հարկային ծառայողը պարտավոր է հարգալից վերաբերմունք դրսևորել խախտումների մասին հաղորդում ներկայացրած հարկային ծառայողների և այլ անձանց նկատմամբ:

ԳԼՈՒԽ 15. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

101. Հարկային ծառայողներն ունեն առողջ և ապահով աշխատավայրի իրավունք՝ առանց խտրականության:

102. Պատշաճ աշխատանքի միջավայրը պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝

1) արդար ու անաչառ,

2) ապահով և աջակցող,

3) զերծ է ալկոհոլից և թմրանյութերից,

4) զերծ է ոտնձգություններից և խտրականությունից,

5) հարգում է անհատական տարբերությունները և մշակութային բազմազանությունը,

6) ապահովում է կատարողականի ազնիվ հետադարձ կապ և զարգացման հնարավորություններ,

7) աջակցում է անձնակազմի մասնակցությանը որոշումների կայացման գործընթացում:

103. Բոլոր հարկային ծառայողները պետք է ունենան առողջ և անվտանգ աշխատանքային միջավայր, քանի որ դա ուղղակիորեն ազդում է հարկային վարչարարության իրականացման պրոֆեսիոնալիզմի վրա: Միաժամանակ ծառայողները պետք է պատասխանատվություն ստանձնեն նպաստել աշխատավայրի անվտանգության պահանջների պահպանմանը և իրենց ղեկավարին անհապաղ զեկուցեն առողջության կամ անվտանգության հետ կապված կանոնների հետ կապված խախտումների մասին:

104. Սկզբունքորեն, ապօրինի թմրամիջոցներ օգտագործողները չպետք է ընտրվեն ծառայությունում աշխատանքի և պատշաճ հետաքննություն պետք է իրականացվի բացահայտելու ծառայողին, ով զբաղվում է թմրամիջոցներ իրացնելու և/կամ տարածելու կամ անօրինական օգտագործելու գործունեությամբ:

105. Հարկային ծառայողները չպետք է ներկայանան ծառայության կամ մնան ծառայության մեջ ալկոհոլի ազդեցության տակ:

106. Հարկային ծառայողները ոչ մի դեպքում չպետք է շահագործեն ծառայողական տրանսպորտային միջոցը կամ այլ տրանսպորտային միջոցը՝ ալկոհոլի ազդեցության տակ:

107. Հարկային մարմնի ղեկավար անձինք առանձնահատուկ կարևոր դեր ունեն Կանոնագրքում սահմանված վարքագծի կանոնների պահպանման հարցում և պետք է՝

1) խստորեն պահպանեն վարքագծի կանոնները՝ այդպիսով օրինակ ծառայելով ծառայողներին,

2) ապահովեն, որ անձնակազմը տեղեկացված լինի համապատասխան օրենսդրությանը, պահանջվող ստանդարտներին, ընթացակարգերին և հրամաններին,

3) ծառայողների հետ վարվեն արդար և բարեխղճորեն.

4) օբյեկտիվ կերպով կիրառեն Կանոնագիրքը և ձեռնարկեն համապատասխան միջոցներ, երբ ծառայության աշխատակիցները չեն պահպանում պահանջվող չափանիշները կամ ցուցաբերում են այնպիսի վարքագիծ, որն առերևույթ չի համապատասխանում Կանոնագրքում սահմանված վարքագծի կանոններին:

ԲԱԺԻՆ 3. ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԽՐԱԽՈՒՍԵԼԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

108. Հարկային ծառայողը պետք է իր աշխատանքի որակը բարձրացնելու նպատակով բաց լինի նորարարական գործելակերպի նկատմամբ, շարունակաբար դիտարկի իր ոլորտին վերաբերելի ազգային ու միջազգային լավ գործելակերպը, հետևի միջազգային և տարածաշրջանային զարգացումներին, ինչպես նաև փորձի դրանք ներմուծել իր աշխատանքում՝ որպես կիրառման ենթակա հնարավոր պրակտիկա:

109. Հարկային ծառայողը պետք է ջանքեր գործադրի իր գործունեության ոլորտին վերաբերելի առկա մարտահրավերները վեր հանելու և դրանց հաղթահարման ուղիներ գտնելու ուղղությամբ՝ մյուս հարկային ծառայողների, հարկային մարմնի այլ ստորաբաժանումների, հանրային քննարկումների և հանրության հետ համագործակցության միջոցով:

110. Հարկային ծառայողը պետք է անհրաժեշտ աջակցություն ցուցաբերի գործընկերներին, հատկապես՝ նորանշանակ հարկային ծառայողներին՝ իրենց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում:

111. Հարկային ծառայողը պետք է անհրաժեշտության դեպքում գործընկերներին ներգրավի իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացում, նրանց թույլ տա արտահայտել այդ որոշումների վերաբերյալ իրենց կարծիքը, իսկ դրանց չհամաձայնելու դեպքում՝ հայտնի պատճառները:

112. Հարկային ծառայողը պետք է այլ կառույցում աշխատանքի անցնելու նպատակով աշխատանքից ազատվելու դեպքում աշխատանքից ազատման դիմումում նշում կատարի նոր աշխատավայրի վերաբերյալ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այլ պաշտոնի է նշանակվում նույն կառույցում:

113. Հարկային ծառայողը պետք է գործադրի բոլոր հնարավոր ջանքերը պետական համակարգչային համակարգերը, սարքավորումները, ծրագրերը, ինչպես նաև հարկային մարմնի տարածքներն անվտանգության հնարավոր սպառնալիքներից պաշտպանելու համար:

114. Հարկային ծառայողը պետք է խրախուսի կոռուպցիոն բնույթի դեպքերի և այլ խախտումների մասին հաղորդում ներկայացնելը և նման վարքագծով օրինակ ծառայի մյուս հարկային ծառայողների համար:

115. Հարկային ծառայողը պետք է քայլեր ձեռնարկի իրեն ենթակա ծառայողների կողմից կոռուպցիոն ռիսկեր պարունակող վարքագիծ թույլ չտալու նպատակով:

116. Հարկային ծառայողը պետք է ստեղծի աշխատանքային բարոյահոգեբանական բարենպաստ և առողջ միջավայր, որը կնպաստի ավելի արդյունավետ աշխատանքի իրականացմանը:

117. Հարկային ծառայողը պետք է բարեխղճորեն կատարի իր պարտականությունները որպես քաղաքացի, ներառյալ՝ բոլոր ֆինանսական պարտավորությունները, հատկապես՝ օրենսդրությամբ նախատեսված հարկերի, տուրքերի և կոմունալ վճարումների գծով պարտավորությունները, պահպանի երթևեկության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ կանոնները:

118. Հարկային ծառայողը հանրային ծառայողների միջև մասնավոր ֆինանսական գործարքներ կնքվելու դեպքում պետք է հավաստիանա և ապահովի, որ իրենց մասնավոր գործարքների արդյունքում հարկային ծառայության հեղինակությունը և հարկային մարմնի աշխատանքը որևէ գործառնական կամ հեղինակության վնաս չի կրի: